

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 51/3

27 նոյեմբերի 2012թ.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը, ուսումնասիրելով քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի լիազոր ներկայացուցչի 29.10.2012թ-ի վարչական բողոքը (մուտք ՀՀ ԿԱ ՊԵԿ 01.11.2012թ. թիվ 12195-12) և վերջինիս առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի նկատմամբ 05.09.2012թ-ին կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410785 վարչական ակտը, որով կիրառվել են <Հարկերի մասին> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով, <Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասով, <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պատասխանատվության միջոցները և լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 310.000 դրամ:

Քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի լիազոր ներկայացուցիչը 29.10.2012թ-ին ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե բերել է վարչական բողոք, որով խնդրել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 05.09.2012թ. հարկային պարտավորությունների առաջադրման և պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ թիվ 1410785 վարչական ակտը: Որից հետո 27.11.2012 թ-ի դիմումով քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի լիազոր ներկայացուցիչը բերել է միջնորդություն, որով խնդրել է 29.10.2012թ-ի վարչական բողոքը քննության չառնել:

<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի համաձայն. <Դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից>:

Հանձնաժողովը, ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, գտնում է, որ քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի լիազոր ներկայացուցչի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Ղեկավարվելով <Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին> ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին կետի <բ> ենթակետի դրույթներով, քաղաքացի Ռազմիկ Հակոբյանի լիազոր ներկայացուցչի 29.10.2012թ-ի վարչական բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կարճել:



Հանձնաժողովի նախագահ՝

Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ